ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ
(XIX դարի վերջին քառորդ)

Հ.Ժ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արևմտահայությանը և Հայկական հարցին նվիրված ռուս հեղինակների աշխատությունները կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինի մեջ մտնում են այն գործերը, որոնցում տրված են Արևմտյան Հայաստանի մանրամասն նկարագրությունն ու վիճակագրությունը: Պատմագիտական նյութերի ընդգրկման տեսակետից, դրանք, անշուշտ, ուշադրության արժանի հետազոտություններ են: Մյուս կողմից, սակայն, ասել, թե դրանք գիտական հատուկ վերլուծություններ են, սխալված կլինենք: Դրանցից յուրաքանչյուրին բնորոշ է մեկ գլխավոր հատկանիշ. բոլորն էլ գրված են ռազմավիճակագրական տեսության տեսքով: Եվ դա բնական էր, քանի որ Արևմտյան Հայաստանն ու Ասիական Թուրքիան Ռուսաստանին առաջին հերթին հետաքրքրում էին ռազմավարական տեսակետից: Երկրորդ խումբը կազմում են այն աշխատանքները, որոնք նվիրված են բուն Հիմնախնդրի արծարծումներին: Ընդ որում, այդ խնդրում ռուս հեղինակները միասնական տեսակետներ չունեն. Նրանց մի մասը, թեպետ պաշտպանում է Հայկական հարցը, սակայն դրա լուծումը տեսնում է մեծ տերությունների միջամտության ու բարեփոխումների մեջ: Մյուսները, կարեկցելով հայերին իրենց կրած տառապանքների համար, միևնույն ժամանակ, այդ ամենի մեղավորը համարում են հայերին: Նրանց կողքին, սակայն, Ռուսաստանում հրատարակվեցին գործեր, որոնցում ոչ միայն իրատեսորեն էր ներկայացվում Հայկական հարցը, այլև տրվում էին խնդրի լուծման արմատական ուղիները:

Վիճակագրական տեսությունների տեսքով գրված ուսումնասիրություններից կարելի է առանձնացնել Ա. Գիպպիուսի «Անդրկովկասին մերձակա Թուրքական կայսրության վիլայեթների վիճակագրական աղյուսակներ» աշխատությունը[1]: Դրանում ամենայն մանրամասնությամբ տրված է հայկական նահանգների վիճակագրությունը, որոնք հետագայում տեղավորված են առանձին աղյուսակներում: Հետազոտության վերջում Գիպպիուսը կցել է նաև այդ նահանգների քարտեզները:

Նույն տասնամյակին Ե.Վայդենբաումի խմբագրությամբ լույս տեսավ «Ասիական Թուրքիայի և Բաթումի մարզի նկարագրության նյութեր» աշխատությունը[2]: Ճիշտ է, հայագիտական նյութն այստեղ բավական քիչ է, սակայն յուրաքանչյուր վիլայեթի նկարագրությունում, հեղինակը տալիս է տեղի հայերի վիճակագրությունը: Նմանատիպ վիճակագրական մի տեղեկա-

---

[1] А.И.Гиппиус, *Статистические таблицы вилайетов Турецкой империи, ближайших к Закавказью, Тифлис, 1889.*

[2] *Материалы для описания Азиатской Турции и Батумской области, Тифлис, 1882.*

տու էլ հրապարակվեց Կարսի մարզի մասին[3]: Որքան նկատեցինք, այս ուսումնասիրությունները միայն վիճակագրական տեսք ունեն, ուստի դրանցում բացակայում է հիմնահարցի բազմակողմանի լուսաբանումը:

Արևմտյան Հայաստանին նվիրված առանձին ուսումնասիրություններ, ռուս հեղինակների կողմից, իհարկե, ձեռնարկվեցին: Դրանցից մեկն էլ Վանի ռուսական հյուպատոս Վ.Մաևսկու «Վանի վիլայեթի ռազմավիճակագրական տեսություն» աշխատությունն էր: Հետազոտության սկզբում հեղինակը տալիս է նահանգի աշխարհագրական, վիճակագրական ու էթնիկական մանրամասն նկարագիրը: Թվում է, թե Վ.Մաևսկին ևս մյուսների նման պետք է բավարարվեր միայն չոր թվերով, սակայն գործին հաղորդել է պատմագիտական բնույթ, թեպետ արտահայտել է հակասական ու տարակուսանք առաջացնող տեսակետներ: Օրինակ, «Հայերը» վերնագիրը կրող բաժնում նա գրում է. «Հայերը հնուց ի վեր Թուրքիայում կազմել են բնակչության առավել ապահով մասը, զբաղվել են առևտրով, ամեն տեսակ արդյունաբերությամբ, արհեստներով ու հողագործությամբ... այն քաղաքներում, որտեղ իրենց մրցակից հույները չկան, առևտրական դասը գլխավորապես կազմված է հայերից»[4]:

Վ.Մաևսկին գրքում փորձել է տալ նաև հայ հասարակական տարբեր խավերի բնութագրերը. «Քաղաքացի հայը, որը հնարավորություն է ունեցել կրթություն ստանալու և տիրապետում է կայուն գիտելիքների, բավական մեծ կարծիք ու համոզմունք ունի իր ժողովրդի մասին: Նրանք գտնում են, որ եթե հայերն այժմ քաղաքական դեր չեն կատարում, պատճառը թուրքական անտանելի լուծն է, իսկ ապագայում, նրանց կարծիքով, հայ ժողովուրդն անկասկած կվերածնվի և իր արժանի տեղը կունենա»[5]:

Հեղինակն այնուհետև մանրամասն ներկայացնում է դարի վերջին Վանում ծավալված իրադարձությունները, 1896թ. պաշտպանական մարտերը, թեպետ ռուս որոշ հեղինակների նման գտնում էր, թե թուրքական դաժանությունների պատճառը «հայ հեղափոխականներն են, որոնք, ճիշտ է, մի կողմից պաշտպանում են իրենց ազգը թուրքերի ու քրդերի հարձակումներից, սակայն հայերի ընդհանուր դրությունը դրանից ոչ միայն չի փոխվում, այլև, ընդհակառակը, գնալով վատանում է. ներկայումս նրանց դրությունն ուղղակի անելանելի է»[6], - գրում է նա: Ճիշտ է, ռուս դիվանագիտի որոշ բացատրություններ կարելի է վիճարկել, սակայն փաստ է նաև ինքնապաշտպանական մարտերից գազազած թուրքական իշխանությունների սանձարձակությունը: Վ. Մաևսկին գույներն այստեղ ուղղակի չափից ավելի խտացնում է: «Եվ իսկապես, - գրում է նա, - հայերի դրությունը գնալով վատանում է, մի կողմից՝ մուսուլմանական բնակչության մշտական սպառնալիքների պատճառով, որոնք պատրաստ են նորանոր բռնություններ կատարել, մյուս կողմից՝ դրանք հեղափոխականների գործողությունների արդյունք են, որոնք ձգտում են արհեստական նոր ցնցումներ առաջ բերել՝ հուսալով, որ Եվրոպա-

---

[3] Карсская область. Свод статистических данных, Тифлис,1889, Н.Хелмицкий Карсская область. Военно-статистический и географический обзор, Тифлис, 1897.

[4] В.Т.Маевский, Ванский вилайет, военно-статистическое описание, Тифлис, 1901. с. 140:

[5] Նույն տեղում, էջ 187:

[6] Նույն տեղում:

կան տերությունները կմիջամտեն և տեղի կտան»[7]: Հեղինակի կարծիքով, այդ տերությունների մեջ հատկապես Անգլիան է, որ «մշտապես պատրաստ է ամեն տեսակ խոչընդոտներ դնելու իր տարածվելուն սպառնացող Ռուսաստանի հզորությանը»[8]: Մանավանդ թյուր համոզմամբ՝ «Արևմտաեվրոպական երկրներին լրջորեն անհանգստացրել են Ռուսաստանի և Թուրքիայի միջև բարեկամական հարաբերությունները, որոնք գնալով ամրապնդվում են /այդ ե՞րբ – Հ.Հ./»[9]: Հեղինակին այնքան է մտահոգել «հայ-անգլիական մերձեցումը», որ վկայակոչելով «Թուրքերից ու քրդերից լսված զրույցները»՝ գրում է. «Հայերի օգտին եվրոպական տերությունների ակտիվ միջամտության դեպքում վերջիններիս սպասվում է գլխովին ոչնչացնում... և դրանք դատարկ սպառնալիքներ չեն»[10]: Վ. Մանակին ուղղակի մոռացել է, որ եվրոպական տերություն ասածներից մեկն էլ իր հայրենի Ռուսաստանն էր, սակայն, չգիտես ինչու, այդ մասին լռում է և հանգիստ արձանագրում է, թե՝ «Գործն, իհարկե, իսպառ բնաջնջման չի հասնի, սակայն, որ հայերն այդ դեպքում ստիպված կլինեն մեծ ողբերգություններ ապրել և հատուցել մեծաթիվ զոհերով, հազիվ թե կասկած լինի»[11]: Հեղինակը մի դեպքում կարծես մտահոգված է հայկական կոտորածներով, մյուս դեպքում անհանգստացած է եվրոպական տերությունների միջամտությունից, սակայն, միևնույն ժամանակ, միանշանակ բացասական վերաբերմունք ունի հայ ազգային-ազատագրական պայքարի հանդեպ[12]:

Նույնատիպ հրապարակում էր նաև Ա. Կոլյուբակինի «Նյութեր Ասիական Թուրքիայի ռազմավիճակագրական տեսության համար» աշխատությունը: Թեպետ այն գրված է ռազմավիճակագրական տեսության տեսքով, իր հիմնական խնդրի լուսաբանությանը զուգահեռ, հեղինակը տալիս է Արևմտյան Հայաստանի աշխարհագրական ու տնտեսական մանրամասն նկարագրությունը. «Այս տարածքներում կա քրիստոնյա հոծ բնակչություն, որը բավական հոգատար վերաբերմունք է ցուցաբերել ռուսական բանակների հանդեպ և կարող է օգտակար լինել ինչպես երկրամասի ուսումնասիրության խնդրում, այնպես էլ մեր տնտեսական կարիքները հոգալու և ուղեկցողների իմաստով: Առաջին հերթին այստեղ պետք է մատնանշել Խնուսի, Գունդեմիրի և Դերջանի հայերին..., սուրբ Կարապետ վանքը, որն ընկած է այդ ճամփաբաժանում: Իր գերազանց կլիմայական պայմաններով և ընդարձակ չինություններով /մինչև 100 սենյակ/, – շարունակում է այնուհետև Ա.Կոլյուբակինը, – կարող է որպես բուժկայան ծառայել մեր զորքերի համար: Վանքում կան պարենի ու ջրի բավական պաշարներ, ձիանոց: Վանականները լավ կապեր ունեն տեղի հայերի հետ և կարող են մեծապես օգտակար լի-

---

[7] Նույն տեղում, էջ 156:
[8] Նույն տեղում:
[9] Նույն տեղում, էջ 189:
[10] Նույն տեղում:
[11] Նույն տեղում, էջ 248:
[12] Մեզ համար զարմանալի չէր, երբ Վ. Մանակու վկայությունները գտանք Թուրքական մի հրատարակությունում, որի օրինակը ցուցադրված է Վանի ներկայիս թանգարանի ցուցասրահում՝ որպես թե «Հայ էքստրեմիստների» կողմից կատարած թուրքական կոտորածների ապացույց:

նել: Վանքի ուղեկցողներն իրենց գործի վարպետն են. գերազանց գիտեն տեղանքը, համարձակ են և նախաձեռնող»[13]:

Պատմագիտական տեսակետից, մեզ համար առավել հետաքրքրական է այն բաժինը, ուր Ա. Կոլյուբակինը քննարկում է արևմտահայության իրավիճակն ու Հայկական հարցը: Հիմնահարցը հեղինակը բաժանել է երկու մասի՝ հայերի դրությունը մինչև Հայկական հարցի առաջացումը և հայերի քաղաքական ու տնտեսական իրավիճակը 1877 – 1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում: «Ներկայացնելով հայերի քաղաքական և տնտեսական դրությունը, թուրքական ու մուսուլմանական բնակչության հետ ունեցած նրանց փոխհարաբերությունները, – գրում է նա, – պետք է նկատել, որ հարցի էությունը վերջին տասնամյակներում բավական փոխվել է: 1877 – 1878թթ. պատերազմից հետո, Հայկական հարցը տեղափոխվեց լիովին այլ հարթություն»[14]: Իհարկե, Ա.Կոլյուբակինը դժվարանում է ամփոփ պատասխան տալ հարցին, սակայն չի խուսափում իրադրության գնահատումից:

Հեղինակը դտնում է, որ Հայկական հարցի առաջացումն արմատապես փոխեց թուրքական լծից հայ ժողովրդի ազատագրական պայքարի ուղին. «Հայերի առավել լուսավորված ու հայրենասիրությամբ լցված մասը ձեռնամուխ եղավ թուրքահայերի քաղաքական դրության բարելավմանը, իր ձգտումները գլխավորապես կապելով հայ բնակչության մեջ ազգային զգացումների արթնացման հետ: Զբավարարվելով կենտրոնում ծավալած գործունեությունից, – գրում է Ա.Կոլյուբակինը, – նրանք այնուհետև քարոզչության անցան բուն հայկական նահանգներում: Հայրենասիրական բովանդակությամբ կրքոտ գրականության տարածման միջոցով նրանք մտադիր էին տեղերում բարձրացնել հայկական ոգին»[15]: Ուշագրավ մի նմանություն կա Արևմտյան Հայաստանին նվիրված ռուս հեղինակների աշխատություններում, և ինչպես կհամոզվենք նաև քիչ հետո՝ մամուլի հրապարակումներում: Նրանց կարծիքով, հայերի ազգային-ազատագրական պայքարի հովանավորողն այդ ժամանակաշրջանում եղել է Անգլիան: Եվ թեպետ Ա.Կոլյուբակինն այդ տերության անունը չի նշում, սակայն անուղղակի կերպով հասկացնել է տալիս: Հարցն այստեղ, իհարկե, Անգլիայի կամ որևէ այլ տերության մատնանշման մեջ չէ: Ռուս հեղինակների կարծիքով, Թուրքիայում XIX դ. վերջերին հայերի ծավալած ազգային-ազատագրական շարժումները ոչ թե ինքնաբուխ էին և ժամանակի հանգամանքներով թելադրված, այլ հրահրված էին եվրոպական տերությունների կողմից: Ա.Կոլյուբակինը, օրինակ, գրում է. «Հայերի այս նկրտումներն իրենց աջակցությունը գտան եվրոպական տերություններից մեկի քաղաքական գործիչների շրջանում: Հայերի մեջ ծայրաստիճան թշնամանք առաջացավ թուրքերի նկատմամբ: Բարոյչության արդյունքն այն եղավ, որ կրքոտ երիտասարդությունն Էրզրումում, Վանում և մյուս վայրերում այն աստիճան ոգևորվեց, որ սկսեց նախապատրաստվել ամենավճռական գործողությունների»[16]: Ռուս հեղինակը միայն դրանով է բացատրում հայերի դեմ «թուրքերի և քրդերի տածած այն թշնա-

---

[13] А.М. Колюбакин, Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, Тифлис, 1888, с. 214.

[14] Նույն տեղում, էջ 113-114:

[15] Նույն տեղում, էջ 121:

[16] Նույն տեղում, էջ 123:

մանքը, որը գնալով ուժեղանում և սրվում է»[17]: Ուրեմն, ընդհարացնող մեկ եզրակացություն արդեն կարելի է անել: Ռուսաստանի հասարակական և գիտական որոշակի շրջանակներում ընդունելի չի եղել հայ ազգային-ազատագրական պայքարը: Դատելով հրապարակված աշխատություններից՝ այն որակված է որպես հեղափոխություն, իսկ կատարողները՝ հեղափոխականներ:

Ա.Կոլյուբակինին մտահոգողը միայն դա չի եղել: «Հայերի շրջանում շարժումները չդադարեցին», - գրում է նա: Հասնելով ազգային ինքնագիտակցության բարձրացման՝ կրքոտ հայրենասերների կուսակցությունը սկսված գործը կիսատ չթողեց և շարունակեց հետապնդել իր հեռահար նպատակները... Բոլորին, ով առնչվում է այս հարցի հետ, հասկանալի է, որ թուրքահայերի շրջանում աճում է անկախության ձգտումը /ընդգծումը մերն է - Հ.Հ./, ուստի թուրքական կառավարության և մյուս ժողովուրդների հանդեպ նրանց վերաբերմունքը վերջին ժամանակներում ընդունել է սուր թշնամական բնույթ»[18]: Ինչպես նկատել ենք, Ա.Կոլյուբակինն այս հարցում Վ.Մաևակու հետ լիովին համերաշխ է. «Հայերի դրությունը գնալով ավելի վատթարացավ, հատկապես հեռավոր նահանգներում, ուր կառավարության ձեռնարկումներին միացան նաև տեղի իշխանավորները»[19]:

Ակնարկի վերջում Ա.Կոլյուբակինն անդրադառնում է հայերի ներկա իրավիճակին. «Քաղաքական իրադրության, ինչպես նաև բարեկեցության տեսակետից, - գրում է նա, - ողջ հայկական բնակչությունը բաժանվում է երեք խմբի՝ քաղաքային ու գյուղական բնակչություն, որոնք գտնվում են բավարար պայմաններում, և գյուղացիներ, որոնք գտնվում են բավական ծանր վիճակում»[20]: Առաջին երկու խմբերը, հեղինակի կարծիքով, քիչ պակասություններ ունեն. զբաղվում են առևտրով, արհեստներով ու հողագործությամբ և իրենց կարիքները համեմատաբար բավարար չափով հոգում են: Երրորդ խմբի մեջ, նրա կարծիքով, մտնում են գլխավորապես Տավրոսի լեռների հայկական գյուղերը: Ընդ որում, Ա. Կոլյուբակինը հաստատում է, որ այն տեղերում, ուր հայերը գերակշռող են ու համախմբված, նրանց դրությունը անհամեմատ բարվոք է, և ընդհակառակը՝ այն տեղերում, որտեղ նրանք սակավաթիվ են ու ցրված, տեղական իշխանություններից խիստ կախման մեջ են: Այստեղ էլ, սակայն, հեղինակը իրենն է պնդում: Ներկայացնելով, օրինակ, գյուղական բնակչության համեմատաբար ծանր վիճակը, Ա. Կոլյուբակինն այնուհետև գրում է. «Արձանագրելով այս փաստերը, մենք հեռու ենք այն համոզումից, որ հայ գյուղաբնակների դրությունն իրականում ծանր է: Թուրքական իշխանությունների և քրդերի կողմից կատարվող դաժանությունների, թալանի և ճնշումների մասին լուրերը գալիս են ամեն կողմից, սակայն այն տեղեկությունները, որոնք կան ինձ մոտ և երեք տարվա սեփական դիտարկումների արդյունք են, բերում են այն համոզման, որ այս բողոքները մեծ մասամբ չափազանցված են»[21]: Սա դեռ չարիքի փոքրագույնն է: Հեղինակի կարծիքով, «այդ հալածանքներն ու ճնշումները հրահրվում են իրենց՝ հայերի կողմից և միջոցառումները, որոնք ձեռնարկվում են

[17] Նույն տեղում:
[18] Նույն տեղում:
[19] Նույն տեղում:
[20] Նույն տեղում, էջ 114:
[21] Նույն տեղում, էջ 129-130:

թուրքերի կողմից. ինքնապաշտպանական են և ոչ թե հարության կամ էլ կրոնական մոլեռանդության զգացումից են հրահրվում»[22]:

Արդեն պարզ են ինչպես Ա.Կոլյուբակինի, այնպես էլ նրա պես մտածող ռուս հեղինակների մոտեցումները Հայկական հարցում: Մեկ հարցում սակայն, արժե շարունակել նրա գրքի քննարկումը. աշխատության վերջում Ա.Կոլյուբակինը դատողություններ է անում տարածաշրջանի ռազմավարական նշանակության շուրջ: Այստեղ արդեն ռուս հեղինակը բավական հստակ պատկերացումներ ունի հարցի վերաբերյալ: Այսպես, մեկնաբանելով 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ստեղծված իրավիճակը, նա գրում է. «Էրզրումի հարթավայրից մինչև Մուրադ գետն ընկած շրջանները կովկասյան-թուրքական ռազմաբեմում Ռուսաստանի համար կարող են ձեռք բերել առաջնակարգ մարտավարական նշանակություն /ընդգծումը հեղինակինն է – Հ.Հ./: Դա հասկանալու համար նախ հարկավոր է որոշ բացատրություններ տալ: Ներկա դարում մեր և Թուրքիայի միջև պատերազմների պատմությունը ցույց է տալիս, որ Ռուսաստանն իր ուշադրությունն առավել կենտրոնացրել է Բալկանյան թերակղզու վրա: Այնտեղ է եղել ռազմական գործողությունների գլխավոր թատերաբեմը, իսկ Ասիական թատերաբեմը մնացել է որպես երկրորդական»[23]: Ա.Կոլյուբակինը գտնում էր, որ այդ իրավիճակը կարող է արմատապես փոխվել. մի կողմից՝ Օսմանյան կայսրության թուլացումը և մեկը մյուսին հետևող բալկանյան նահանգների կորուստը, մյուս կողմից, Ռուսաստանի՝ իր հարավային սահմաններն ընդարձակելու ձգտումը, քայլ առ քայլ հարցին նոր երանգ են հաղորդում: Այժմ հազիվ թե կարելի լինի կասկածել նրանում, որ Ռուսաստանի ու Թուրքիայի նոր բախման դեպքում Կովկասյան-թուրքական ռազմաճակատը ձեռք կբերի առաջնակարգ նշանակություն և կդառնա ռազմական գործողությունների գլխավոր թատերաբեմը»[24] /ընդգծումը մերն – է Հ.Հ./:

Ինչպես նկատում ենք, հեղինակն իր կանխատեսումներում զրեթե իրավացի է: Ավելին, Ա.Կոլյուբակինը համոզված էր, որ Թուրքիայի և Ռուսաստանի մշտնջենական պայքարը և եվրոպական տերությունների միջև հակասությունների հետագա խորացումը կհանգեցնեն այդ տարածաշրջանում շահերի բախման: Իսկ փոքրասիական թատերաբեմ ասելով՝ հեղինակը նկատի ուներ երկու գլխավոր ռազմաճակատներ՝ Հայկականը և Անատոլիականը: Ռուս հեղինակները Ռուսաստանի ռազմաքաղաքական շահերի տեսանկյունից համակարծիք են, և ի վերջո, այդ հարցում նրանց չենք կարող մեղադրել: Սակայն հայագիտական նյութի տեսակետից, Վ. Մաևակու և Ա.Կոլյուբակինի աշխատությունները հազիվ թե կարելի լինի դասել արժեքավորների շարքը: Իսկ այդպիսիները Ռուսաստանում, անշուշտ, քիչ չեն գրվել:

Որքան էլ սպասելի չէր, արևմտահայության հիմնախնդրի մասին դատողություններ է արել նաև Վ.Պոտտոն: Նրա կարծիքով, Արևելյան Հայաստանի միացումով «ռուսական տիրակալն իր հովանավորությունը տարածեց նաև այն հայերի վրա, որոնք դեռևս գտնվում են մուսուլմանական տերությունների տիրապետության տակ»[25]: Հեղինակը, սակայն, չափից ավելի լա-

---

[22] Նույն տեղում, էջ 130:
[23] Նույն տեղում, էջ 214:
[24] Նույն տեղում:
[25] Տե՛ս. В. Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях, вып. 4, СПб., 1888, с.653-654.

վատես էր, երբ գրում էր, թե. «Եվրոպական տերությունները... ևս միացան հայ ժողովրդի հավատի ու ազատության սրբազան իրավունքների պաշտպանությանը և այդ ժամանակից սկսած, Թուրքիայի հետ կնքած պայմանագրերում մշտապես ի ցույց են դրել խնդրին ուղղված պարտավորությունները»[26]: Այլ խոսքով՝ արևմտահայության շահերի պաշտպանության երաշխիքը Վ.Պոտտոն ամենից առաջ տեսնում էր մեծ տերությունների, և մասնավորապես, Ռուսաստանի մեջ:

Արևմտահայության հիմնահարցի լուծման նույն տեսակետին էր նաև Հ.Լազարևը, որն այդ ծանր տարիներին հանդես եկավ փոքրիկ մի գրքույկով[27]: «Մեր կարծիքով, - գրում է նա, - հայերին դժոխային այս իրավիճակից կարող են հանել միայն մեծ տերությունները, ազատելով նրանց հրեշավոր հարկային բեռից և փրկել նոր կոտորածներից»[28]: Միայն թե Հ.Լազարևն այդ ամենը կապում էր Թուրքիայի դեմ Ռուսաստանի և Անգլիայի նոր պատերազմի ծագման հետ: Իսկ մինչ այդ հարցի լուծման միակ ճանապարհը հեղինակը տեսնում էր Արևմտյան Հայաստանի վարչական նոր բաժանման մեջ, «որի կառավարիչները պետք է ընտրվեն Եվրոպայի քրիստոնյաներից, ոստիկանությունը՝ տեղի քրիստոնյաներից ու մահմեդականներից: Հակառակ դեպքում, - գրում է նա, - քրդերն ու Թուրքերն իրենց կառավարիչների և վալիների գլխավորությամբ չեն զլանա կոտորածներ կազմակերպել հայերի դեմ...Առանց այս պայմանների ապահովման, բարենորոգումները Հայաստանում օգուտ չեն բերի և մեծ տերությունների համար նոր հոգսերի պատճառ կդառնան»[29]:

Արևմտյան Հայաստանի և Հայկական հարցի մասին արժեքավոր դատողություններ կան Ի.Գոլոբորոդկոյի «Թուրքիա» ընդհանուր խորագիրը կրող աշխատությունում: Ուսումնասիրությունն ամբողջովին նվիրված է XIX դ. վերջին Թուրքիայում տիրող իրավիճակի և Հայկական հարցի լուսաբանմանը: Գրքում քննվող հարցերն օբյեկտիվության տեսակետից և բովանդակությամբ, էականորեն տարբերվում են նախորդներից. ռուս հեղինակներից քչերն են կարողացել այդպես իրատեսական գնահատական տալ իրադարձություններին և ճշմարիտ ներկայացնել Հայկական հարցի էությունը. «Օսմանյան կայսրության բազմացեղ ժողովուրդների մեջ հայերը կարևոր նշանակություն ունեն, - գրում է հեղինակը Հայաստանի և հայերի մասին պատմող իր ակնարկում: - Հանդիսանալով հին աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը, հայերն իրենց պատմության ընթացքում ապրել են բազում ծանր իրավիճակներ. եղել են ժամանակներ, երբ նրանք հասել են իրենց հզորության գագաթնակետին և ծաղկել են, սակայն այլացեղ նվաճողների մեղքով հետագայում դարձել են իրավազուրկ հպատակներ»[30]: Չնայած այդ ամենին, հայերն «իրենց բնատուր հատկությունների և աշխատասիրության շնորհիվ, դժվարություններին դիմակայելու հազվագյուտ հմտությամբ կարողացել են հասնել տնտեսական ու մշակութային զգալի առաջընթացի:

---

[26] Նույն տեղում, էջ 654:

[27] Տե՛ս. И.Д. Лазарев, *Причины бедствий армян в Турции и ответственность за разорение Сасуна, Тифлис, 1895.*

[28] Նույն տեղում, էջ 19:

[29] Նույն տեղում, էջ 38:

[30] Տե՛ս. И.И.Голобородько, Турция, М.,1912, с.218: Սա գրքի երկրորդ և լրացված հրատարակությունն է, առաջին անգամ այն լույս է տեսել 1908թ.:

....Հույների հետ միասին նրանք իրենց ձեռքն են վերցրել երկրի ողջ առևտուրը...քաղաքներում առանց հայերի միջնորդության հնարավոր չէ որևէ ձեռնարկում կատարել գիտության, տեխնիկայի, արվեստի և արհեստների բնագավառներում: Թուրքիայի լավագույն բժիշկները հայեր են, փաստաբաններն ու ուսուցիչները հայեր են, ճարտարագետներ, դերասաններ, ֆինանսիստներ, բանկիրներ, խանութպաններ, ձեռնարկատերեր՝ դարձյալ հայեր են»[31]:

Ի. Գոլոբորոդկոն թեպետ չի խուսափում խոսել հայ ժողովրդի բարոյական նկարագրի առանձին դրսևորումների մասին, սակայն ռուս որոշ հեղինակների նման, դրանք չի բացաբձակացնում: «Առանձին թերությունները, – գրում է նա, – լիովին բացատրվում են հայ ժողովրդի տխուր ճակատագրով և բարբարոսական Արևելքի դարերից եկած պատմության արդյունքն են»[32]: Ավելին, հեղինակը, հայ ժողովրդին համեմատելով տարածաշրջանի հին ու նոր ժողովուրդների հետ, նշում է. «Հայերն Ասիական Թուրքիայի ամենից ավելի մշակութային տարրն են: Երբ օսմանյան տիրապետության հետևանքով շատ ժողովուրդներ կանգ առան իրենց զարգացման մեջ, երբ անձը, գիտությունն ու ազատությունը մտան արգելված հասկացությունների շարքը և անողոքաբար արմատախիլ արվեցին, հայերն այդ պայմաններում նույնիսկ պահպանեցին թե՛ իրենց հավատը, թե՛ ազատ մտածողությունը և թե՛ ստեղծագործական ոգին: Նրանք միաժամանակ ամուր կապ պահպանեցին եվրոպական մշակույթի հետ, դարձան նրա տարածողները մուսուլմանական տարածքներում»[33]: Ավելին ասել հնարավոր չէր: Ռուս հեղինակը, այնուհետև, շարունակում է. «Երբեմն զարմանում ես, թե ինչպես է այդ ամենը հաջողվել հայերին, որոնք թեպետ արդեն բավականին ժամանակ է, ինչ կորցրել են քաղաքական անկախությունը, սակայն այսքան դարերի ընթացքում կարողացել են պահպանել իրենց ազգային հոգևոր անձեռնմխելիությունը: Այս առեղծվածը, – գրում է Ի.Գոլոբորոդկոն, – պետք է փնտրել հայ ժողովրդի պատմական հարուստ անցյալի մեջ: Այնտեղ Անիի խորհրդավոր ավերակներն են, կիսավերված թանգարաններ, հուշարձաններ, որոնք հայերի ազգային ինքնատիպության լուռ վկաներն են»[34]:

Դատելով Ի. Գոլոբորոդկոյի՝ հայերի մասին արած մեկնաբանություններից՝ նա բավական հեռացել է իր ժամանակի ռուս այն պասմարաններից, որոնք, ինչպես նկատեցինք, «գունեղ» էին նկարագրում հայերի վիճակը Թուրքիայում. «Օսմանյան տերությունում հային կարող են հալածել ու թալանել բոլորը՝ ով դրա ուժն ունի: Թուրք մուսուլմանի դեմ հայի վկայությունը չի ընդունվում: Հարկերը հայերից գանձվում են զգալիորեն ավել չափերով, քան օսմանյան մյուս հպատակներից՝ մուսուլմաններից: Հայերի անձի և գույքի հանդեպ թուրքական իշխանությունների ոտնձգությունները գրեթե մշտական են ու անպատժելի: Գրականությունը, լեզուն, հավատը, դպրոցները ոստիկանության և գրաքննիչների կողմից ենթարկվում են դաժան հալածանքների: Ազգային մշակութային միասնության առկայծումները որակվում են որպես խռովարարություն և անջատողականություն»[35]: Հեղինակի կար-

---

[31] Նույն տեղում, էջ 219-220:
[32] Նույն տեղում:
[33] Նույն տեղում, էջ 221:
[34] Նույն տեղում:
[35] Նույն տեղում, էջ 222:

ծիքով, Թուրքիայում գործող հարկային համակարգն ուղղակի քամում է հայ գյուղացուն ու աշխատավորին:

Ի.Գոլոբորոդկոն իր գործընկերներից տարբերվում է նաև Հայկական հարցի շուրջ կատարած իր ճշմարտացի դատողություններով: «Հայկական հարցը, - գրում է նա, - իրականում Թուրքիայում քրիստոնյա բնակչության իրավիճակի ընդհանուր հարցի մի մասն է միայն: Այն առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերել վերջին ժամանակներում և հատկապես՝ հայկական կոտորածներից հետո: Զարդերի ծրագրավորված կազմակերպումը, նրանց սարսափելի չափերն ու դրանցում բարձրաստիճան իշխանավորների մասնակցությունը սպառնալիքի տակ են դրել հայ ժողովրդի հետագա գոյությունը Թուրքիայում»: Կարդալով ռուս հեղինակին, ակնհայտ է դառնում, որ նա խորությամբ է հասկացել ու ըմբռնել Հայկական հարցի էությունը: Գրքում ամենայն մանրամասնությամբ են նկարագրվում ջարդերի տեսարանները: Հեղինակը դրանում մեղավորության մեծ բաժին է հանում նաև քրդերին՝ չմոռանալով նշել հայ ամիրաների չարաշահումների մասին. «Նրանք էլ իրենց հերթին, օգտվելով անվերահսկելիությունից, լիովին կախման մեջ էին գցել տեղական բնակչությանը և համագործակցում էին Թուրքական իշխանությունների հետ»[36]: Հեղինակի տեսադաշտից չի վրիպել նաև հայ հասարակության մեջ, հատկապես վերնախավում տիրող անհամաձայնությունն ու անհամերաշխությունը. «Նրանց մեջ խուլ պայքար էր գնում ազդի վրա իշխելու համար: Միմյանց դեմ թշնամացած էին պատրիարքն ու ամիրաները... Եկեղեցին վտանգավոր ճգնաժամ էր ապրում: Կաթոլիկական քարոզչությունը Անգորայում և Կ.Պոլսում զգալի հաջողություն ուներ: Պակաս ակտիվությամբ չէին գործում նաև բողոքականները. ամերիկյան քարոզիչները հայ լուսավորչական հոգևորականության քարացած դոգմաներին հակադրում էին բողոքականության քննադատական մտքերը և հաղթում էին ոչ այնքան խոսքով, որքան գործով. իրենց հետևորդների համար հիմնում էին բարեգործական, լուսավորական ու փրկագնության հիմնարկություններ: Հին եկեղեցուն սպառնում է քայքայում»[37]: Կարծում ենք, որ այդ հարցն այսօր էլ նույնքան հրատապ է: Կրոնական ամենատարբեր աղանդները, որոնք բուն են դրել Հայաստանում, հաջողությամբ շարունակում են հայերի «ոգիների որսը», ինչը, կարծում ենք, հայ եկեղեցուն մտահոգելու տեղիք պիտի տա:

Ռուս հեղինակն իրավացի էր նաև հայ հասարակական և քաղաքական մթնոլորտի ըմբռնման ու մեկնաբանության խնդրում: Նրա կարծիքով, հայ հասարակության մեջ առկա ներքին հակասությունները հանգեցրին այն բանին, որ «ազգային ներկայացչության... քողի տակ ամիրաներն անցկացնում էին իրենց շահադիտական ծրագրերը: Այս ամենը, հասարակ ժողովրդի և հայոց վերնախավի միջև երկարատև ու կատաղի պայքարի պատճառ դարձավ: 1848թ. հեղափոխությունների ալիքները ներթափանցեցին նաև հայ մտավորականության շրջանակները: Երիտասարդությունը, որն արդեն տիրապետում էր ազգային գաղափարներին, այն ընդունեց որպես հեղափոխական կոչ՝ մշակութային-ազգային ինքնավարության համար»[38]: Գոլոբորոդկոն ճիշտ պատասխան է տալիս նաև այն հարցին, թե ովքեր էին այդ պայքա-

---

[36] Նույն տեղում,էջ 230:
[37] Նույն տեղում:
[38] Նույն տեղում, էջ 231:

բի առաջամարտիկներն ու կրողները: «Դեմոկրատաբար տրամադրված երիտասարդությունն իր վրա վերցրեց այդ պատասխանատու խնդիրը, - գրում է նա: - Նրանք երազում էին հայ ժողովրդի մշակութային ու քաղաքական վերածնության մասին և դրան էին դիմում լուսավորության և ազգային գրականության քարոզչության միջոցով: Դպրոցները բացվում էին բացառապես հումանիտար ծրագրերով, գործին ակտիվորեն մասնակից դարձավ նաև ուսուցչությունը: Ժողովրդի մեջ զրույցներ էին տարվում նրան հետաքրքրող հարցերի շուրջ...Լույս էին տեսնում գրքեր, որոնցում ներկայացված էր հայ ժողովրդի հարուստ ու հերոսական անցյալը: Մշակութային-ազգային շարժման գլուխ, արդեն երկար ժամանակ, կանգնած էր քաջակորով Մկրտիչ Խրիմյանը»[39]: Հեղինակը ճիշտ գնահատական է տալիս նաև արևմտահայերի ազգային սահմանադրությանը և գտնում է, որ «սահմանադրությունն իրականում բոլոր իրավունքները տալիս էր մշակութային ու ազգային ինքնագործունեության համար, բացի անհրաժեշտից՝ անձի իրավունքից և զուլքային անձեռնմխելիությունից: Երկրում, որտեղ օրենքները գոյություն ունեին միայն գրասենյակային առնետներին հղփացնելու համար, ուր բոլոր իրավունքներն ու պարտականությունները որոշվում էին յաթաղանի ուժով, ուր քրիստոնյա բնակչությունը զրկված էր ամենատարրական իրավունքներից, ժողովուրդը լիովին ղատապարտված էր անիրավ վիճակի»[40]: Նա մանրամասն անդրադառնում է նաև Հայկական հարցի պատմությանը, նշելով, որ այն իր հրապարակման օրից այդպես էլ մնաց որպես եվրոպական դիվանագիտության սեփականություն. «Տարիներն իրար ետևից անցնում էին, իսկ Բեռլինի համաձայնագրով նախատեսված բարեփոխումներն առաջվա պես մնում էին թղթի վրա: Անգլիական դիվանագետների հաղորդագրությունների համաձայն, քրիստոնյաների վիճակը հայկական նահանգներում ավելի վատ է, քան դրանից առաջ: Թալանը, թուրքական ղատարանի և իշխանությունների ծախվածությունը, կյանքի, անձի, կանանց, գույքի հանդեպ բռնությունները կատարվում էին բացահայտ ու անպատիժ կերպով»[41]:

Ի. Գոլոբորոդկոն ռուս առաջին հեղինակներից էր, որ անդրադարձավ հայ ազգային կուսակցությունների գործունեությանը, գնահատեց նրանց տեղն ու դերը ազգային-ազատագրական պայքարում: Ի տարբերություն շատերի, որոնք նույնիսկ այդ կուսակցությունների անունները չէին տալիս և որակում էին «հեղափոխականներ», նա, ընդհակառակը, դրանց առաջացումը դիտում էր որպես ազգային-ազատագրական պայքարի արդյունք և տվել է այդ կուսակցությունների գործունեության ճշմարտացի գնահատականը. «Դաշնակցություն կուսակցությունը, գործուն մասնակցություն ունեցավ 90-ական թվականների իրադարձություններին. լայնում վայրերում կազմակերպեց ցինված ինքնապաշտպանություն, քրդերին հեռու պահեց հայկական գյուղերից, պարտիզանական պայքար մղեց թուրքական բանակների դեմ, ձգտում էր եվրոպական տերությունների ուշադրությունը հրավիրել թուրքական վայրագությունների վրա՝ ակնկալելով նրանց միջամտությունը»[42]: Ինչ էլ որ նկարագրում ու բնութագրում է Գոլոբորոդկոն, կտրուկ

[39] Նույն տեղում, էջ 232:
[40] Նույն տեղում, էջ 236:
[41] Նույն տեղում, էջ 243-244:
[42] Նույն տեղում, էջ 252:

տարբերվում է նախորդ հեղինակներից: Այս առումով էլ, նրա աշխատանքը հիմնահարցի մասին հաջողված գործերից մեկն է:

Արևմտահայության հիմնախնդրին ճշմարտացի մեկնաբանություն է տրված նաև Վ.Տենիշևի «Քաղաքակրթության խայտառակությունը» գրքույկում: Խնդրին անդրադառնալու շարժառիթը, ինչպես ինքն է գրում ներածականում, « Ռուսաստանում արհեստականորեն ուռճացված ու անիրական պատկերացումներն են Հայաստանում ծավալված շարժումների ու «Հայ հեղափոխականների» մասին »[43]: Ամենից առաջ, իհարկե, Տենիշևի նպատակը Թուրքիայում քրիստոնյա բնակչության անմխիթար վիճակի բացահայտումն է: «Թուրքական սուլթանը, - գրում է հեղինակը, - շատ անգամ է տվել Ռուսաստանին և Եվրոպային՝ հպատակ քրիստոնյաների իրավունքները մուսուլմանների հետ հավասարեցնելու խոստումներ: Եվ եթե հիմա ի մի հավաքենք թուրքական կառավարության ձեռնարկած միջոցառումների մասին վիճակագրական տվյալները, ապա կտեսնենք, որ սուլթանը մատն անգամ չի շարժել իր խոստումների կատարման համար: Ընդհակառակը՝ քրիստոնյաների դրությունը Թուրքիայում գնալով միայն վատացել է: Պատճառը լիովին հասկանալի է»[44]:

Մյուս կողմից, Վ.Տենիշևն իր մտահոգությունն է հայտնում այնպիսի մի կարևոր հարցի շուրջ, ինչպիսին դեպքերի իրական ներկայացումն էր ռուսական մամուլում և կառավարական շրջանակներում. «Մեր մամուլի թուրքամետ մասը պնդում է, թե հայ հեղափոխականները միայն «խռովարարներ» են: Իմ կարծիքով, սակայն, նրանք իրենց հայրենիքի ջերմ պաշտպաններն են, պատրաստ զոհելու ամեն ինչ՝ նրան որևէ կերպ օգտակար լինելու համար»[45]: Հեղինակը չի թաքցնում, որ Ռուսաստանում հասարակական կարծիքը Հայկական հարցի հանդեպ բարենպաստ չէ. «Մեծամասնությունը գտնում է, որ հայկական հեղափոխությունը հրահրված է Անգլիայի կողմից, որպեսզի Ռուսաստանին հետ պահի Հեռավոր արևելքի իր խնդիրներից»[46]: Վ.Տենիշևն ավելի իրատեսական է դնում հարցը. «Ընդունենք նույնիսկ, թե հայ հեղափոխականները հովանավորվում են Անգլիայի կողմից: Լա՛վ, թող Անգլիան փնտրի իր անձնական շահը, բայց արդյո՞ք դրանից հետևում է, թե մենք պետք է այդպես վարվենք: Փաստերն ինքնին առավել քան ակնհայտ են... Հայկական կոտորածները միայն դատարկ խոսքերով ու հայտագրերով չես կանգնեցնի»[47], - եզրակացնում է Վ.Տենիշևը: Գրքույկում այնուհետև նկարագրվում են համիդյան կոտորածների դաժան տեսարանները, որից հետո հեղինակը գրում է. «Այս ամենը կատարվեց Եվրոպայի աչքի առջև: 1895թ. ընթացքում կոտորածներ տեղի ունեցան Կ.Պոլսում, Էրզրումում, Տրապիզոնում, Զմյուռնիայում և այլուր: Ի վերջո, սուլթանը մեծ տերությունների պահանջով հրապարակեց բարենորոգումների ծրագիրը: Անշուշտ, կարելի է հրապարակել բազում պերճախոս օրենքներ, սակայն եթե կառավարությունը շահագրգռված չէ իր իսկ ընդունած օրենքի իրագործման համար, ապա այն միայն մեռյալ տեքստի է վերածվում: Թուրքական կառավարութ-

---

[43] Տե՛ս. В. Тенишев, Позор цивилизации, СПб., 1897, с.1.
[44] Նույն տեղում, էջ 5:
[45] Նույն տեղում:
[46] Նույն տեղում, էջ 16:
[47] Նույն տեղում, էջ 17:

յունը օրենքներն ընդունում է աջ ձեռքով, ոչնչացնում ձախով»[48]: Ավելի դիպուկ նկատել հնարավոր չէր:

Վ. Տենիշևը գրքույկի երկրորդ մասում քննում է Հայկական հարցի նկատմամբ մեծ տերությունների դիրքորոշումը: Հեղինակի բնութագրումներն այստեղ էլ դիպուկ են ու ճշմարտացի.«Մեծ տերությունների դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ սոսկալի է: Այժմ արդեն լիովին ապացուցված է, որ կոտորածները կատարվում են Թուրքական կառավարության հրահանգով, մինչդեռ դեսպաններն այս խնդրում անվերջ խորհրդակցում են, ի ցույց դնում Բ.Դռանը, հայտագրեր գրում... սակայն օգուտն ի՞նչ: Էական ոչինչ տեղից չի շարժվել: Հայերի վիճակը շարունակում է մնալ նույնը»[49]: Վ.Տենիշևը, այնուհետև, կատարում է իր հետևությունը. «Եվրոպան հպարտանում է իր քաղաքակրթությամբ, սակայն նրանցից յուրաքանչյուրը Հայկական հարցում փնտրում է իր անձնական շահը՝ չդադարելով ջերմ հարաբերություններ պահպանել սուլթանի հետ, վարկաբեկելով իրեն՝ հենց իր աչքի առջև»[50]: Ինչպես տեսնում ենք, Վ.Տենիշևի հարցադրումն ուղղակի է:

Գրքույկը ժամանակի հրատարակությունների համեմատությամբ մեկ առավելություն ևս ուներ: Եթե որոշ հեղինակներ, ներկայացնելով իրավիճակը, կարեկցում էին հայ ժողովրդին, իսկ լավագույն դեպքում մատնացույց անում մեծ տերություններին, ապա Վ.Տենիշևը հարցի լուծումը տեսնում էր արմատական ու վճռական քայլերի ձեռնարկման մեջ: Նրա գրքույկի վերջին բաժինն այդպես էլ վերնագրված է՝ «Ինչպես օգնել հայերին: «Հայերի դրությունն այժմ այնպիսին է, - գրում է նա, - որ նրանց պետք է անհապաղ աղատել այդ վայրենի ցեղի ճանկերից: Հարցի լուծման այլ ուղի ես չեմ տեսնում»[51]: Իսկ այն, թե իբր մեծ տերությունների միջոցով կարելի է սուլթանին ստիպել բարենորոգումներ կատարել, հեղինակը միանշանակ բացառում է նման քայլերի օգտակարությունը: Մեզ ուղղակի զարմացրեց Վ.Տենիշևի այն կանխատեսումը, որը վկայում է, թե որքան խորամուխ է հեղինակը հարցին. «Ամեն ինչ կհանդարտվի միայն քսան տարի: Հետո ճգնաժամը նորից կսկսվի՝ եթե ոչ Մակեդոնիայում, ապա Հայաստանում, ուր որ ցանկաք: Թուրքիայում ճգնաժամերը լինում են քսան տարին մեկ անգամ: Եվ այդ ժամանակ՝ տերությունները կրկին համերաշխ չեն գործի...»[52]: Իսկ այս մտքերի մեջ Վ.Տենիշևի գլխավոր հետևությունն է. «Ինքնին Կոստանդնուպոլսում Թուրքիայի գոյությունը քաղաքակրթության խայտառակությունն է /ընդգծումը մերն է - Հ.Հ./: Նրա գոյությունը միայն ու միայն ապացուցում է, թե որքան անձնապաշտական են շահագրգռված տերությունների նպատակներն Արևելյան հարցում»[53]:

Վ. Տենիշևն առաջարկում էր Հայկական հարցի ամենից իրատեսական լուծումը. «Հարցը լուծել Ռուսաստանի հետ Հայաստանի միացումով...որը շատ շուտով կվերածվի ծաղկուն մի երկրի..., իսկ Թուրքերին պետք է ապա-

---

[48] Նույն տեղում, էջ 12-13:
[49] Նույն տեղում, էջ 15:
[50] Նույն տեղում:
[51] Նույն տեղում, էջ19:
[52] Նույն տեղում, էջ 22:
[53] Նույն տեղում:

տություն տալ՝ իրենց տիրույթները ասիական նախկին տարածքներում փնտրելու համար, որտեղից որ եկել են»[54]:

Ընդհանուր գծերով, ռուս պատմագիտության մեջ այսպես են ներկայացված Արևմտյան Հայաստանն ու Հայկական հարցը, թեպետ հիմնահարցին նվիրված ուսումնասիրությունները շարունակվեցին նաև հետագայում:

АРМЯНСКИЙ ВОПРОС И ЗАПАДНЫЕ АРМЯНЕ В ОЦЕНКЕ РУССКОЙ ИСТОРИОГРАФИЧЕСКОЙ МЫСЛИ / ПОСЛЕДНЯЯ ЧЕТВЕРТЬ XIX В./

А.Ж. ОГАНЕСЯН

Резюме

В русской исторической науке последней четверти XIX века немало работ посвящено Армянскому вопросу и проблемам западных армян. В большинстве этих трудов дана обьективная оценка Армянского вопроса, представлена реальная картина западноармянской действительности, резни и погромов армян в Турции. Однако среди этих публикаций встречаются также работы, в которых эти события трактуются в искажённом виде. В статье представлена позиция русских историков в Армянском вопросе. Рассматриваются также труды русских авторов, в которых дается оценка роли России и проводимой ею политики в регионе.

[54] *Նույն տեղում, էջ 22-23:*